



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ  
ՈՐՈՇՈՒՄ № 39Լ**

**ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի  
ԹԻՎ 16Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետը, ՀՀ Նախագահի 26.09.2017թ. թիվ ՆՀ-830-Ա հրամանագիրը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011 թվականի օգոստոսի 26-ի «ՀՀ առաջին ատյանի դատարանների նստավայրերը և դատավորների մասնագիտացումների ցանկը հաստատելու մասին» թիվ 16Լ որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Հավելվածի 9-րդ աղյուսակի 6-րդ կետի «Նստավայրի անվանում» սյունակում «Չարենցավան» բառը փոխարինել «Աբովյան» բառով,

բ) Հավելվածի 9-րդ աղյուսակի 8-րդ կետի «Դատավոր» սյունակից հանել «Մկրտչյան Վաղինակ Կարլենի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հոկտեմբերի 13-ից:

**Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների  
խորհրդի նախագահ**

**Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**

2017թ. հոկտեմբերի 12  
ք. Երևան